

ԽԱՐԹԱԼԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Խարթալ կամ Բարթալ Կ. Պոլսոյ ար-
ուարձաններէն մէկն է Բաղկեդոնէն 26
մղոն հեռու: Նախորդ մեծ պատերազմէն
առաջ բնակչութեան մեծ մասը հայ եւ
յոյն էին. այսօր միայն 20 տուն Հա-
յեր կան, իսկ Յոյները բոլորովին լքած
են Բարթալը:

Հայերը տակաւին ունին Ս. Նշան եկե-
ղեցին, հիմնուած 1853ին: Եկեղեցին ա-
ռանձնապատուկ բան մը չունի, բացի ա-
ւանդատան մէջ գտնուող Ս. Աստուածա-
մօր հայկական պատկերէն, որ Ժ. Դա-
րու գործ պէտք է ըլլայ եւ յատկանշական
է իր Տիրամօր եւ Յիսուս Մանուկի սա-
լորի չափ խոշոր աչքերով: Թարմ նկար
է եւ արժէք կը ներկայացնէ մեր Ժ. Դա-
րու նկարչութեան արուեստին:

Բարթալի Ս. Նշան եկեղեցին սեփա-
կանութիւնն է նօտրդիր աւետարան մը,
թղթեայ, 30x20ի վրայ: Աւետարանը նը-
կարագրած է Տիրատուր անունով անձ
մը, իսկ գրչութիւնը Արիստակէս երէցին
է: Գրչութեան տեղը, ինչպէս յիշատակա-
բանը կը վկայէ, Կ. Պոլսին է:

Բարթալի աւետարանը բաւական գեղե-
ցիկ զարդարուած է. Տիրատուր, հետե-
ւող դասական հին ծաղկողներուն՝ կրցեր
է տալ երանգներու ճոխութիւն. ոսկին,
կապոյտը եւ կարմիրը տիրող գոյներն են:
Լուսանցքներու զարդերը վերարտադրու-
թիւն կը տեսնուին հիններուն, սակայն ա-
ւետարանիչները արդիական ոճ մ'ունին,
ուր կայ շարժում, գծերու ճշտութիւն,
ձեւերու, ոտքերու եւ դէմքի որոշ զար-
գացում:

Մատթէոս աւետարանիչը նստած է ա-
թոռի մը վրայ, հրեշտակն իր դէմը ոտքի
կեցած է՝ ձեռքը բռնած Աւետարանը:
Աւետարանի թիկունքին կը բարձրանայ
բաց դեղնորակ շէնք մը:

Աւետարանի առաջին էջը ոչ միայն կա-
պոյտ եւ ոսկի երկար լուսանցադարձ մը
մը ունի, այլ էջի կէսէն աւելի բռնած են
ոսկի եւ կարմիր քառեակներ:

Մարկոսի Աւետարանը վերինին խորքն
ունի իբր տեսարան: Աւետարանիչը նըս-
տած է փոքր աթոռի մը վրայ, դիմացը
առիւծը՝ փորին վրայ պառկած եւ թա-
թերուն մէջ բռնել է Աւետարանը:

Առաջին գլուխը զարդարուած է կար-
միր եւ ոսկի ծաղիկներով: Լուսանցքի
զարդը նոյնն է Մատթէոսի Աւետարանին
հետ:

Ղուկաս աւետարանիչը որոշ նորութիւն
մը չունի նախորդներուն վրայ: Ինքն ալ
նստած է աթոռակի մը վրայ եւ եզը պառ-
կած փորին վրայ, առջեւի ոտքերուն մէջ
առնելով Աւետարանը կը ներկայացնէ
Ղուկասին: Իր խորքի տեսարանը կար-
մրադեղ հովանոցաձեւ տուն մըն է: Առա-
ջին գլուխը նոյնպէս ոսկի եւ կարմիր
զարդեր ունի:

Յովհաննու աւետարանիչին պատկերը
դժբախտաբար աւրուած է, աւելի կեն-
դանի եւ շարժուն կը տեսնուի անորոշ
գիծերուն մէջ:

Առաջին գլուխը նախորդներուն զար-
դերն ունի:

Աւետարանի արտաքին կազմը նախոր-
դը չէ մնացած, այլ 1894ին նորոգուած է
հետեւեալ յիշատակագրութեամբ.

Թաւշաւ արծաթիւ կեղիւ Ս. Աւետա-
րանիս շինեցաւ ծախիւ Թորգոմեան եղ-
բարց վահրամայ բժշկի եւ Գեորգայ եր-
կրագործի, յամի Տեառն 1894 Յունուար
10:

Ակնարկուած Բժիշկ Վահրամ Թորգո-
մեանը ծանօթ է իր բժշկական - պատմա-
կան հրատարակութիւններով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք ամենասուրբ Երրորդութեան եւ
միասնական Աստուածութեան Հօր եւ
Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտեանից. ամէն:

Արդ եղեւ աւարտումն աստուածախօս
մատենիս եւ սրբոյ Աւետարանիս Յիսուսի
Բրիստոսի, յամի ծննդեան Բրիստոսի
ՌՈՂԱ. իսկ է Հայոց թվականի ՌՃԽ, ի
հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջ-
միածնի տեառն Եղիազարու սրբազան
կաթողիկոսի եւ ի դերութեան աղբիւն
տաճկաց որ Օսմանցիք կոչին սուլթան
Ահմէտի, ի մայրաքաղաքս Կոստանդինու-
պոլիս, ի դառն եւ ի դժար ժամանակիս
որ նեղութեամբ լի է ամենայն աշխարհս.
զի ժ տարի՛ է որ պատերազմին Տաճկունք
ընդ Ալամանաց աղբիւն, զոր զնացին
խորխտանօք թէ առցեն գեր(կ)իւս ի Նէմ-
ցէո՞ւ². նոքա զսոսա յետս դարձուցեալ,
եկին առին զՊաւլոսի³ եւ զՊելիկարոս⁴ եւ
զՆիշ⁵ մինչեւ ի Սօֆեա, զոր հերուան ամի
ամի կրկին զնացին Տաճկունք եւ առին
զՆիշ եւ զՊելիկարոս զի զօրքն Ալամանաց
ոչ գոյին անդ, այլ զնացեալ էին ընդդէմ
Ֆռանսիզո՞ւ⁶:

Բայց այսմ ամի⁷ կրկին զօրք բազմօք
զնացեալ անցին զԹոււմա⁸ գետ եւ ի տե-
ղին որ Զէմի⁹ կոչեն, զիպեալ են ճակատ
առ ճակատ եւ զօրքն Ալամանաց յաղթեալ

են զօրացն Տաճկաց, եւ բազում կոտորած
արարեալ մինչեւ վէղերն որ էր Գէօփրու-
լուիս տղան եւ տէֆօթրատարն եւ Եֆնիկ-
չէրին¹⁰ տղան, եւ այլ մեծամեծ փաշայք եւ
չօրպաճիք անկան ի պատերազմին եւ մնա-
ցեալք սակաւք հաղիւ ի Պելիկարոս մտեալ
ապրին: Զոր տէր Աստուած խաղաղու-
թիւն արացէ:

Եւ յայսմ ամի անօրինեալ Տաճկունք
առին խարաճ¹¹ ի քահանայից եւ ի սեւա-
զլիսաց¹² Հայոց եւ Յունաց, թէ որպէս
ողորմութեամբ Աստուծոյ յետս բարձաւ
բազում աշխատութեամբ եւ կաշառօք.
բայց զառաժնին յետ չիտվին, իսկ պատ-
ճառ արմնելոյ խարաճին քիւրի (աղտոտ)
տէֆօթրատարն եւ սարի Օսմանն էր, զոր
տէր Աստուած եղեւ վրէժխնդիր եւ երարձ
զչարն մերձ ընդ մերձ:

Եւ եւս մի նեղութիւն այլ ժամանակիս
այս. զի փողն ձի (120) ԸՆ. Ա. զուռուշ
էր ի խարաճն եւ ի փրիւն¹³ չառնէնուն սակ
զնաց մինչեւ ԴՃ (400) ԸՆ, Ա. զուռուշ
եղեւ եւ պաղրկեանն զախտա (ընդեղէն)
չերեր եւ եղածն այլ պահեցին. ամէն բան
սղցաւ Ա. հոխա միսն 2 (80) ըստակ եղեւ:
Ա. հոխա պանիրն 2 ըստակ. Լ տրամ հացն
Ա. ըստակ. եւ զայլ ամենայն բան սոցա
նման իմացիք: Եւ այնք եւս անգտանելիք,
զոր բազում օր խանութք եւ չուկայք փա-
կեցան եւ մարդեր կախեցին թէ ձի, ԸՆ.
Ա. զուռուշն անցնի փողին, այլվիւ չեղեւ,

1 Յիշատակագիրը կ'անարկէ Վիեննայի չուրջ
կատարուած պատերազմները (1683):

2 Նէմցէո՞ւ. Աւստրոյ-Հունգարական կայսրու-
թիւնը:

3 Պաւլոս. Պուտա-Բեչու:

4 Պելիկարոս. Պելիկարոս:

5 Նիշ. գլխաւոր քաղաք Մակեդոնիոյ: Յիշա-
տակագիրը կը սխալի երբ կ'ըսէ թէ Նիշ եւ
Սօֆիա զբաւեցին Աւստրիոյ եւ Լեհաստանի
զունդերը. թերեւս շարժական յառաջապահ
զունդեր երեւցած ըլլան Պալքաններու հա-
բաւը:

6 1863-1869 երկար պատերազմներուն՝ Ֆրանսա
ձեռքի տակէն կ'օգնէր Թուրքերուն, հակա-
ռակ Աւստրիոյ եւ Վենետիկներուն, որոնք
կը գործէին յունական կղզիներուն մէջ:

7 1691, Ֆաղիլ Մուսթաֆա Փաշան, որդի Գէօփ-

րուլուի, նոր վէղերը կազմակերպեց սուլթա-
նական բանակը, սակայն բախտ չունեցաւ,
ճակատ առ ճակատ կոռուելով, Օսմանեան մե-
ծադոյն պատերազմներէն մին, կորսնցուց ճա-
կատամարտը եւ ինքն ալ ինկաւ Հունգարիոյ
Զլինքէմէն քաղաքին մօտերը: Բրիստոնեայ
բանակին կը հրամայէր Եւգենիոս Սաւոյիոյ
փշխանը:

8 Թոււմա. Դանուբ գետը:

9 Զէմին - Զիմուն. քաղաք Պելիկարոսի հիւսիս -
արեւմուտքը, այժմ Եւրոպական:

10 Եֆնիկչէրի. Եֆնիկչի:

11 Խարաճ. նոր տուրք մը, որ յետոյ կաշառքով
յետս կոչուած է:

12 Սեւազլուլիս. նախատական բացատրութիւն.
պէտք է հասկնալ վարդապետները:

13 Փրի. Ֆրանսերէն բառ. զբամաստան չահ:

դեռ եւս այն դառնութեանց մէջ կամք, զոր տէր Աստուած ի քաղցրութիւն փոխարկեցէ:

Արդ որք հանդիպիք սրբոյ Աւետարանի տեսութեան, Աստուած ողորմի ասացէք հոգւոյ մեղաւոր Տիրատուրիս¹⁴ նա եւ զսակաւ յիշատակարանս դժադրողիս Արիստակէս¹⁵ երիցուս եւ ծնողաց իմոց եւ աղղատոհմիցս, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս:

¹⁴ Տիրատուր. ծանօթ մը չէ ինձ համար:

¹⁵ Արիստակէս. անծանօթ ծաղկող մըն է Աւետարանի օրինակողն ու յիշատակարան զրոյը,

Յիշատակ է Ս. Աւետարանս Նարմերցի մահտեսի Եսայի, որդի Մահտեսի Մաթէոսին կենդանի հոգոյն, որ յիշատակ դուղըն խարթալ ի դուղըն Ս. Նշան եկեղեցւոյն. ամէն: Ո ոք որ այս Ս. Աւետարանս զբաւ տայ կամ դողանայ կամ ծախէ, զպատիճն Կայենի եւ Յուդայի առցէ:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ինչպէս զբնութեան նոյնութենէն կը հասկըցուի:

1960-Ի ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Սորհրդային Հայաստանը ամէն տարի իր բանաստեղծական հունձքը կու տայ. հինները կը շարունակեն նոր երկեր հրապարակ հանել. նորեր կու գան շարքերը խտացնելու համար: Իրենց մտածելակերպով, բառերով, ոճերով եւ ասութիւններով կը տարբերին արեւմտահայ զրոյներէն: Իրենց ներշնչումի ենթահողը դարձեալ հայ ժողովուրդն է, հայ գիւղացին իր միամիտ պատկերներով մակերևութային մտածութեամբ եւ պարզութեամբ:

Ընդհանրապէս աշխատանք չեն տանիր ճոխացնելու իրենց արուեստն ու բառամթերքը, կը սիրեն աշուղական քնարը եւ անոնց յատուկ բառերը, եաք, քան, հոգիս եւն. ամէն քերթուածի մէջ զրեթէ կը հանդիպինք:

Բայց իրենց շունչը տաք է, մեր հոգէն կու գայ, մեր արեւուն դոյնն ունի, առանց արուեստի՝ սրտիդ կը խօսին դեղջուկի մը պարզութեամբ:

ՊԱՐՈՅՐ ՍԵԻԱԿ

Բոլորովին նոր զրոյ մըն է, երիտասարդ աւելնով եւ օժտուած չնորհքով:

Նա 1959ի վերջերը հրապարակ հանեց իր Անլոնի գանգալատունը, երկարաշունչ եղերերգութիւն մը, նուիրուած անմահ Կոմիտաս վարդապետի ծննդեան 90ամեակին (1869-1959): Բանաստեղծական կենսագրութիւնն է մեծ վարդապետին. բաժնուած վեց ընդհանուր զրուակներու. - Յայգալոյսի համագանգ, Արեւագալի համագանգ, Միջօրէի համագանգ, Ծաւալուող համագանգ, Եղեռնի համագանգ, Ահագնացնող համագանգ: Այս ընդհանուր բաժանումները պիտի ունենան իրենց ենթաբաժանումները բազմաթիւ Ղօղանջներու անլոնի հնչումով:

Պարոյր Սեւակի գիրքը առաջին օրերուն տատամսոտ ընդունելութիւն մը գրտաւ, սակայն քանի մը շաբաթ յետոյ 5,000 օրինակները արդէն սպառած՝ անդտանելի դարձած էին:

Ինչո՞ւ Անլոնի գանգալատունը դրած է վերնագիրը եւ ոչ գանդակ. զանգակատունը չէնքն է եւ ոչ զօղանջողը. թերեւս Կոմիտասի անձը զանգակատուն պատկերացուցած է եւ անոր ձայնն ու արուեստը՝ զօղանջ:

Հանդարտ երեւակայութեամբ, առանց

ճիգի եւ արուեստի մարմաջի, կը սկսի իր տաք շունչով հիւսել կենսադրականը. նախ կոչում մը Յ. Թումանեանի (ծնած 1869ին) եւ ապա թուիչք:

Անատուրի մթին խորքերում

Մէկ ուրիշ մանուկ լոյս աշխարհ եկաւ:

Մեյրամաղձոտ շէշով պիտի երգէ այդ մանուկին աղքատ ծնունդը. անոր մօրմէն անմիջական որրութիւնը յուզում կը պատճառէ հեղինակին. առանց ճիշերու, մեղեդիական շունչով, ինչպէս Կոմիտաս պիտի երգէր հայ ժողովուրդին լուռ ցաւերը, կը վերակոչէ անոր մօր յիշատակը:

Բայց ինչո՞ւ զնաց Հայոց թագուհին, Մնար

Ու ծիծ տար

Իր Սողոմոնին, մեր Կոմիտասին

Նրա ճակատի

Ամպերը վանէր.

Նախ նրա ոտին,

Եւ յետոյ սրտին

Փըշերը հանէր

Մնար ու նրան մի ողջ ժողովուրդ

«Մեծ մայր» անուանէր

«Վեհամայր» կոչէր

Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա

Իր բերնին տանէր

Փէշերը պաչէր

Մնար... չմնաց:

Ի՞նչ ժառանգութիւն պիտի տային խեղճ Սողոմոնին այդ աղքատ ընտանիքը - Լոկ Գալսի կլկրլան եւ էջմիածնի ճեմարանին մէջ թրքախօս պատանին դարձաւ Լուսաստղ մի նոր:

Պարոյր Սեւակ կ'առաջնորդէ իր ընթերցողը էջմիածնի ճեմարանը, ուր խայտաբղիտ հաւաքածուն, Լոյս է ուզում. ուսում ուսում: Կոմիտաս պիտի սորվէր հայերէն, պիտի ճանչնար Շարահանները, մանրուսումը, խաղերը: Իր ձայնը հրաշալի էր, գիւթիչ, միակ հայրենի ժառանգութիւնը: Եւ ահա Արարատեան դաշտերուն մէջ պիտի գտնէր Սոնա Եաքը. գեղջուկ երգերը իր սիրտը պիտի բանային նոր արեւոտ կեանքի:

Պարոյր Սեւակ ընդարձակ էջերով պիտի թափառի Կոմիտասի հետ հայ ժողովուրդին մէջ

Եւ ուրտեղ երգը

Այնտեղ էր հիմա եւ Կոմիտասը:

Հայկական կեանքը, պարերը, երգերը զարնան Արեւագալի օրերուն, մօթակէզ ամբան, ոսկեայ աշունին պիտի ներշնչեն հեղինակին ճոխանալ հայ երգի եւ դաշտերու դեղեցկութեան գովերգով: Կոմիտասի կեանքին ամէնէն բանաստեղծական տարիներն են եւ հեղինակը իրաւունք ունի ծաւալուն էջեր տալու. խառնելով բոյր եւ դոյն իր աշուղատիպ տողերուն:

Եղեռնի համագանգը պատմականն է կոտորածներուն: Հեղինակը կը փոխէ իր խանդավառ ոճը եւ կը դառնայ տխուր բաներ պատմող, մուր քսելով խարդախ եւրոպացիին երեսին, ջարդարար թուրքը ներկայացնելով անասնական մի ժողովուրդ: Սակայն շատ մանրամասնելով ջարդերու պատմականը, կը տուժէ իր քնարական շունչը: Երկար ջատագովական մ'է հայ ստեղծագործ հոգիին եւ կործանարար թուրքին մէջ:

Հաշիւ չեն ծխում,
Խմում են գինի:

Եւ ապարանք ու վանքեր կը կերտեն ժայռերէն:

Պիտի յիշատակէ տրամօրէն Ապրիլեան եղեռն ու Կոմիտասի եղբրական աքսորը: Բուռն շէշով կու տայ իր տողերուն, երբ կ'երգէ պոլսական թաղերէն աքսոր դնացող մեր մտաւորականները. երբ կը խընդրէին վարդապետէն Երգել Կառնկ կամ Խնկի ծառ: Սրտադին էջեր պիտի տար հեղինակին, եթէ:

Ախ, վարդապետ, դուք է հայցում

Տխրալալուկ ամբողջ մի աղդ

Քո սեւասուղ սուրբ բերանով

Տէր ողորմեա

Խնդրանքին մէջ չխառնէր անյոյս հայհոյանք Աստուծոյ դէմ, երբ ամբողջ աղգը